ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՐՈՒՍՏ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՅՍՈՒ ՀԱՍԱՆԵԼԻ Է ԹՎԱՆՇԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը հայ արվեստագիտության գլխավոր կենտրոնն է, միակ գիտական օջախը, որտեղ իրականացվում է հայ արվեստի բոլոր տեսակների ուսումնասիրությունը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում է գործում հանրապետությունում եզակի Արվեստաբանական գրադարանը (վարիչ՝ Գայանե Մեկբեկյան), որը 1964 թվականին հիմնարկեց ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Ռուբեն Զարյանը Հալեպից բերած շումերական, ասորական, իրանական և հունական արվեստներին նվիրված չորս գրքերով:

Գրադարանի հարուստ ու բազմազան ֆոնդը բաղկացած է արվեստի տարբեր ճյուղերին (ճարտարապետություն, կերպարվեստ, կինո, թատրոն, երաժշտություն, կիրառական արվեստ) առնչվող տարբեր լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և այլն) հրատարակություններից: Գրադարանի գրականությունը համակարգված է, կա ինստիտուտում հրատարակված գրքերի բաժին, ատենախոսությունների, սեղմագրերի, հազվագյուտ արտասահմանյան հանրագիտարանների, բառարանների, տեղեկատվական բառարանների, արվեստի, կերպարվեստի, փիլիսոփայության, էսթետիկայի, ճարտարապետության, երաժշտության, կինոյի, թատրոնի, հնագիտության, գրականագիտության ու լեզվի, պատմության, պարբերական մամուլի բաժիններ:

Գրադարանն ունի գիտության ու մշակույթի երախտավորների նվիրաբերած անձնական գրադարանների հիման վրա ստեղծված՝ Լիդիա Դուրնովոյի, Միհրան Թումաճանի, Մարկ Գրիգորյանի, Հուրիկ Սուրուզյանի, Արամ Արամյանի անհատական ֆոնդերը, որտեղ պահպանվում է հազվագյուտ գրականություն՝ «Հուշարար», «Տարազ», «Գեղարվեստ», «Ազգագրական հանդես», պատարագներ, շարակնոցներ, երգարաններ և այլն: Գրադարանում կան հնատիպ գրքեր. բավական է նշել «Երաժշտական երգեցմունք հոգևորական: Շարակնոցը» (Կ.Պոլիս, 1742):

Իր գործունեության տասնամյակների ընթացքում Արվեստաբանական գրադարանը սպասարկել է ոչ միայն արվեստի ինստիտուտի և ԳԱԱ համակարգի մյուս ինստիտուտի աշխատակիցներին, հայցորդներին ու ասպիրանտներին, այլև հանրապետության արվեստի բուհերի դասախոսներին, ասպիրանտներին, հայցորդներին և բարձր կուրսերի ուսանողներին:

2022 թվականը դարձավ կարևոր հանգրվան Արվեստաբանական գրադարանի կենսագրության մեջ: ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանի հանձնարարականով ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի աշխատակիցների ջանքերով՝ Տիգրան Զարգարյանի հմուտ ղեկավարությամբ, թվայնացվեց Արվեստաբանական գրադարանը, և հետայսու հայ արվեստով հետաքրքրվող ընթերցողները կարող են հայ արվեստագիտական գրականությանը ծանոթանալ Արվեստաբանական գրադարանի QR կոդի միջոցով կամ թվանշային գրադարանում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տիրույթ մուտք գործել հետևյալ հղմամբ՝ https://arar.sci.am/dlibra/collectiondescription/13:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ